

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀ**

2023 թվականի օգոստոսի 10-ի

**ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՁԵՎՆ ՈՒ ԴՐԱ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ 2012
ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 6-Ի N 2-Ն ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

N 78-Ն

ՀՐԱՄԱՆ

Հիմք ընդունելով «Ակցիզային հարկի մասին» օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ կետը,
11-րդ հոդվածը և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 41-րդ հոդվածը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Սահմանել ակցիզային հարկի հաշվարկի ձևն ու դրա լրացման կարգը՝
համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության 2012 թվականի
փետրվարի 6-ի ««Ակցիզային հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
օրենքի որոշ դրույթների վերաբերյալ հրահանգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության հարկային պետական վարչության պետի 2004 թվականի
փետրվարի 12-ի թիվ 5/Ղ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 2-Ն հրամանը:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀ**

Դ. ՊՈՂՈՍՅԱՆ

**2023 թվականի օգոստոսի 10
ք. Ստեփանակերտ**

Հավելված
Արցախի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2023 թվականի օգոստոսի 10-ի
N 78-Ն հրամանի

Ձև

ՀԱՇՎԱՐԿ ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿԻ		1. Փաստաթղթի հերթական համարը				լրացվում է հարկային մարմնի կողմից			
2. Հարկ վճարողի հաշվառման համարը									
3. Հարկ վճարողի անվանումը									
4. Հարկ վճարողի գտնվելու վայրը (բնակության վայրը)									
5. Հաշվետու ժամանակաշրջանը		Տարի					Ամիս		

6. Հաշվետու ժամանակաշրջանում ակցիզային հարկով հարկման բազան և հաշվարկված ակցիզային հարկի գումարը							
Ծածկագիրը՝ ըստ ԱՏԳ ԱԱ-ի	Ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքի անվանումը	Հարկման բազայի միավորը	Օտարված ապրանքների քանակը (ծավալը)	Սպիրտայնության աստիճանը, %	Հարկման բազայի միավորի արժեքը, ՀՀ դրամ	Ակցիզային հարկի դրույքաչափը	Ակցիզային հարկի գումարը, ՀՀ դրամ
[6.1]	[6.2]	[6.3]	[6.4]	[6.5]	[6.6]	[6.7]	[6.8]
Ընդամենը							
7. Ճշգրտող հարկային հաշիվներում արտացոլված ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների ակցիզային հարկով հարկման բազան և ակցիզային հարկի գումարը (նվազեցում)							
Ծածկագիրը՝ ըստ ԱՏԳ ԱԱ-ի	Ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքի անվանումը	Հարկման բազայի միավորը	Օտարված ապրանքների քանակը (ծավալը)	Սպիրտայնության աստիճանը, %	Հարկման բազայի միավորի արժեքը, ՀՀ դրամ	Ակցիզային հարկի դրույքաչափը	Ակցիզային հարկի գումարը, ՀՀ դրամ
[7.1]	[7.2]	[7.3]	[7.4]	[7.5]	[7.6]	[7.7]	[7.8]
Ընդամենը							
8. Ճշգրտող հարկային հաշիվներում արտացոլված ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների ակցիզային հարկով հարկման բազան և ակցիզային հարկի գումարը (ավելացում)							
Ծածկագիրը՝ ըստ ԱՏԳ ԱԱ-ի	Ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքի անվանումը	Հարկման բազայի միավորը	Օտարված ապրանքների քանակը (ծավալը)	Սպիրտայնության աստիճանը, %	Հարկման բազայի միավորի արժեքը, ՀՀ դրամ	Ակցիզային հարկի դրույքաչափը	Ակցիզային հարկի գումարը, ՀՀ դրամ
[8.1]	[8.2]	[8.3]	[8.4]	[8.5]	[8.6]	[8.7]	[8.8]

Ընդամենը								
							հազար ՀՀ դրամ	
9. Հաշվարկված ակցիզային հարկի գումարը (ակցիզային հարկի կրեդիտը)								
10. Ճշգրտող հարկային հաշիվներով գործարքների մասով ակցիզային հարկի գումարի							x	
1) նվազեցում								
2) ավելացում								
11. Չվերադարձված կամ հետ չընդունված ակցիզային դրոշմանիշների թվին, տեսակին և տարողությանը համապատասխան պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքների համար վճարման ենթակա ակցիզային հարկի գումարը								
12. Ակցիզային հարկով չհարկվող՝ օտարված ապրանքների հարկման բազան								
13. Արցախի Հանրապետության տարածք ներմուծված հումքի մասով հայտարարագրում առանձնացված ակցիզային հարկի գումարը								
14. Արցախի Հանրապետության տարածքում ձեռք բերված հումքի մասով հարկային հաշվում առանձնացված ակցիզային հարկի գումարը								
15. Հաշվանցման (պակասեցման) ենթակա ակցիզային հարկի ճշգրտման ընդհանուր գումարը, այդ թվում՝ ըստ ճշգրտման հիմքերի							[Ա]. Ավելացում [Բ]. Պակասեցում	
1) Օրենքի հոդվածի համարը				2) Օրենքի հոդվածի կետի համարը			X X	
16. Ընդամենը հաշվետու ժամանակաշրջանում ակցիզային հարկի դեբետը ([13] + [14] + [15.Ա] - [15.Բ]) Եթե գործողության արդյունքը՝ 1) հավասար է 0-ի՝ [Ա] և [Բ] վանդակներում լրացվում են «0». 2) դրական է՝ լրացվում է [Ա] վանդակը. 3) բացասական է՝ լրացվում է [Բ] վանդակը							Ա. Դրական	Բ. Բացասական
17. Հաշվետու ժամանակաշրջանի արդյունքով՝ 1) եթե լրացված է [16.Ա] վանդակը, ապա ([9] - [10.1] + [10.2] + [11] - [16.Ա]). 2) եթե լրացված է [16.Բ] վանդակը, ապա ([9] - [10.1] + [10.2] + [11] + [16.Բ]). 3) եթե [16.Ա] և [16.Բ] վանդակներում լրացված են «0», ապա ([9] - [10.1] + [10.2] + [11]): Եթե գործողության արդյունքը դրական է՝ լրացվում է [Ա] վանդակը, եթե բացասական է՝ լրացվում է [Բ] վանդակը, եթե հավասար է 0-ի՝ [Ա] և [Բ] վանդակներում լրացվում են «0»:							[Ա]. Ենթակա է պետական բյուջե վճարման (կրեդիտ)	[Բ]. Ենթակա է պետական բյուջեից հաշվանցման (դեբետ)

Գործադիր մարմին
(անհատ ձեռնարկատեր) _____
ստորագրությունը
անունը, ազգանունը

Կ.Տ.
Հաշվապահ _____
ստորագրությունը
անունը, ազգանունը

ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՁԵՎԻ ԼՐԱՑՄԱՆ

1. Ակցիզային հարկի հաշվարկի ձևը (այսուհետ՝ հաշվարկ) ներկայացվում է հարկային մարմին «Ակցիզային հարկի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 8-րդ հոդվածին համապատասխան:

2. Հաշվարկի ճշգրտումները կատարվում են Օրենքի 8-րդ հոդվածին և սույն կարգի 10-րդ կետին համապատասխան:

3. Հաշվարկի 6-8-րդ կետերի համապատասխան սյունակներում արժեքային մեծությունները լրացվում են Հայաստանի Հանրապետության դրամներով, իսկ 9-17-րդ կետերում՝ հազար դրամներով՝ ստորակետից հետո մեկ նիշի ճշտությամբ: Հաշվարկի վանդակներում արժեքային մեծության բացակայության դեպքում հաշվարկի այդ վանդակներն ընդունվում են «0» (զրո):

4. Հաշվարկի 1-ին կետը լրացվում է հարկային մարմնի կողմից:

5. Հաշվարկի 2-րդ կետում լրացվում է հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ):

6. Հաշվարկի 3-րդ կետում լրացվում է կազմակերպության լրիվ անվանումը, իսկ անհատ ձեռնարկատեր համարվող ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը:

7. Հաշվարկի 4-րդ կետում լրացվում է կազմակերպության գտնվելու վայրը, իսկ անհատ ձեռնարկատեր համարվող ֆիզիկական անձի դեպքում՝ բնակության վայրը:

8. Հաշվարկի 5-րդ կետում լրացվում են այն տարին ու ամիսը, որի համար ներկայացվում է հաշվարկը:

9. Հաշվարկի 6-րդ կետի՝

1) [6.1] և [6.2] սյունակներում համապատասխանաբար լրացվում են հաշվետու ամսում օտարված ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների (այսուհետ՝ ապրանք) ծածկագրերը և անվանումները՝ ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի (այսուհետ՝ ԱՏԳ ԱԱ) դասակարգչի: Ընդ որում, ծածկագրի նիշերի թիվը պետք է համապատասխանի Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի աղյուսակում նշված ծածկագրերի նիշերի քանակին,

2) [6.3] սյունակում լրացվում են հաշվետու ամսում օտարված ապրանքների համար Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հարկման բազայի միավորները,

3) [6.4] սյունակում լրացվում է հաշվետու ամսում օտարված ապրանքների քանակը (ծավալը),

4) [6.5] սյունակը լրացվում է միայն ԱՏԳ ԱԱ 2207 և 2208 ծածկագրերին դասվող ապրանքների համար, իսկ [6.6] սյունակում լրացվում է ԱՏԳ ԱԱ ծածկագրերին դասվող տվյալ ապրանքի արժեքը (առանց ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի գումարների)՝ հաշվարկված Օրենքով սահմանված համապատասխան հարկման բազայի միավորի համար,

5) [6.7] սյունակում լրացվում է հաշվետու ամսում օտարված ապրանքների համար Օրենքով սահմանված կամ Օրենքին համապատասխան հաշվարկված ակցիզային հարկի դրույքաչափը, իսկ [6.8] սյունակում՝ ըստ առանձին ապրանքատեսակների ակցիզային հարկի գումարը,

6) [6.8] սյունակի «Ընդամենը» տողում լրացվում է [6.8] սյունակում լրացված թվերի հանրագումարը:

10. Հաշվարկի 7-րդ և 8-րդ կետերում լրացվում են գործարքի ճշգրտման արդյունքները: Ընդ որում, գործարքի ճշգրտման արդյունքներն ակցիզային հարկի մասով լրացվում են՝

1) ճշգրտող հարկային հաշվի դուրսգրման օրը ներառող հաշվետու ամսվա համար ներկայացվող հաշվարկում, եթե գործարքի ճշգրտման արդյունքում նվազում են գործարքից առաջացած հարկային պարտավորության գումարները.

2) հիմնական գործարքի կատարման օրը ներառող հաշվետու ամսվա համար ներկայացվող հաշվարկում, եթե գործարքի ճշգրտման արդյունքում ավելանում են գործարքից առաջացած հարկային պարտավորության գումարները:

11. Հաշվարկի 7-րդ կետում լրացվում են գործարքի ճշգրտման արդյունքները (նվազեցումը): Ճշգրտվող հարկային հաշիվներում արտացոլված ապրանքների մասով հաշվարկի [7.1] և [7.2] սյունակներում համապատասխանաբար լրացվում են ապրանքների ծածկագրերը և անվանումները՝ ըստ ԱՏԳ ԱԱ դասակարգչի, [7.3] սյունակում՝ տվյալ ապրանքների համար Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով

սահմանված հարկման բազայի միավորները, [7.4] սյունակում՝ ապրանքների քանակը (ծավալը), [7.7] սյունակում՝ Օրենքով սահմանված կամ Օրենքին համապատասխան հաշվարկված ակցիզային հարկի դրույքաչափը, [7.8] սյունակում՝ ըստ առանձին ապրանքատեսակների ակցիզային հարկի գումարը, իսկ [7.8] սյունակի «Ընդամենը» տողում [7.8] սյունակում լրացված թվերի հանրագումարը: Հաշվարկի [7.5] սյունակը լրացվում է միայն ԱՏԳ ԱԱ 2207 և 2208 ծածկագրերին դասվող ապրանքների համար, իսկ [7.6] սյունակում լրացվում է ԱՏԳ ԱԱ ծածկագրերին դասվող տվյալ ապրանքի արժեքը (առանց ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի գումարների)՝ հաշվարկված Օրենքով սահմանված համապատասխան հարկման բազայի միավորի:

12. Հաշվարկի 8-րդ կետում լրացվում են գործարքի ճշգրտման արդյունքները (ավելացումը): Ճշգրտվող հարկային հաշիվներում արտացոլված ապրանքների մասով հաշվարկի [8.1] և [8.2] սյունակներում համապատասխանաբար լրացվում են ապրանքների ծածկագրերը և անվանումները՝ ըստ ԱՏԳ ԱԱ դասակարգչի, [8.3] սյունակում՝ տվյալ ապրանքների համար Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հարկման բազայի միավորները, [8.4] սյունակում՝ ապրանքների քանակը (ծավալը), [8.7] սյունակում՝ Օրենքով սահմանված կամ Օրենքին համապատասխան հաշվարկված ակցիզային հարկի դրույքաչափը, [8.8] սյունակում՝ ըստ առանձին ապրանքատեսակների ակցիզային հարկի գումարը, իսկ [8.8] սյունակի «Ընդամենը» տողում [8.8] սյունակում լրացված թվերի հանրագումարը: Հաշվարկի [8.5] սյունակը լրացվում է միայն ԱՏԳ ԱԱ 2207 և 2208 ծածկագրերին դասվող ապրանքների համար, իսկ [8.6] սյունակում լրացվում է ԱՏԳ ԱԱ ծածկագրերին դասվող տվյալ ապրանքի արժեքը (առանց ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի գումարների)՝ հաշվարկված Օրենքով սահմանված համապատասխան հարկման բազայի միավորի համար:

13. Հաշվարկի 9-րդ կետում լրացվում է հաշվետու ամսում հաշվարկված ակցիզային հարկի գումարը (ակցիզային հարկի կրեդիտը), որը պետք է հավասար լինի [6.8] սյունակի «Ընդամենը» տողում լրացված գումարին:

14. Հաշվարկի 10-րդ կետի՝

1) 1-ին ենթակետում լրացվում է ճշգրտող հարկային հաշիվներում արտացոլված ապրանքների մասով ակցիզային հարկի նվազեցվող գումարը, որը պետք է հավասար լինի [7.8] սյունակի «Ընդամենը» տողում լրացված գումարին:

2) 2-րդ ենթակետում լրացվում է ճշգրտող հարկային հաշիվներում արտացոլված ապրանքների մասով ակցիզային հարկի ավելացվող գումարը, որը պետք է հավասար լինի [8.8] սյունակի «Ընդամենը» տողում լրացված գումարին:

15. Հաշվարկի 11-րդ կետում լրացվում է հաշվետու ամսում Օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան վճարման ենթակա ակցիզային հարկի գումարը:

16. Հաշվարկի 12-րդ կետում լրացվում է հաշվետու ամսում Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ակցիզային հարկով չհարկվող՝ օտարված ապրանքների հարկման բազան:

17. Հաշվարկի 13-րդ կետում լրացվում է հաշվետու ամսում ակցիզային հարկ վճարողի կողմից Արցախի Հանրապետության տարածք ներմուծված հումքի մասով հայտարարագրերում առանձնացված ակցիզային հարկի գումարը:

18. Հաշվարկի 14-րդ կետում լրացվում է հաշվետու ամսում ակցիզային հարկ վճարողի կողմից Արցախի Հանրապետության տարածքում որպես հումք ձեռք բերված ապրանքի մասով մատակարարների կողմից դուրս գրված հարկային հաշիվներում առանձնացված ակցիզային հարկի գումարը:

19. Հաշվարկի 15-րդ կետում լրացվում է հաշվետու ամսում Օրենքի համաձայն կատարվող վերահաշվարկների (վերաձևակերպումների) արդյունքում հաշվանցման (պակասեցման) ենթակա ակցիզային հարկի գումարի ավելացումը կամ պակասեցումը՝ ըստ Օրենքով սահմանված հիմքերի՝ լրացնելով Օրենքի հոդվածի և կետի համարները:

20. Հաշվարկի 16-րդ կետում լրացվում է հաշվետու ամսում ակցիզային հարկի դեբետը՝ հաշվարկի [13], [14], [15.Ա] վանդակներում լրացված թվերի հանրագումարի և [15.Բ] վանդակում լրացված թվի տարբերությունը: Եթե գործողության արդյունքը հավասար է 0-ի՝ [Ա] և [Բ] վանդակներում լրացվում են «0», եթե դրական է՝ լրացվում է [Ա] վանդակը, իսկ եթե բացասական է՝ լրացվում է [Բ] վանդակը:

21. Հաշվարկի 17-րդ կետում լրացվում է հաշվետու ամսվա արդյունքով պետական բյուջե վճարման ենթակա գումարը (կրեդիտը) կամ պետական բյուջեից հաշվանցման

(պետական բյուջեից վերադարձման) ենթակա ակցիզային հարկի գումարը (դեբետը):
Ընդ որում՝

1) եթե լրացված է հաշվարկի [16.Ա] վանդակը, ապա ($[9] - [10.1] + [10.2] + [11] - [16.Ա]$) գործողության արդյունքը լրացվում է [Ա] վանդակում, եթե այդ արդյունքը դրական թիվ է, և [Բ] վանդակում լրացվում է «0», իսկ եթե այդ գործողության արդյունքը բացասական թիվ է, ապա այն բացարձակ արժեքով լրացվում է [Բ] վանդակում՝ [Ա] վանդակում լրացվելով «0».

2) եթե լրացված է հաշվարկի [16.Բ] վանդակը, ապա ($[9] - [10.1] + [10.2] + [11] + [16.Բ]$) գործողության արդյունքը լրացվում է [Ա] վանդակում, իսկ [Բ] վանդակում լրացվում է «0».

3) եթե հաշվարկի [16.Ա] և [16.Բ] վանդակներում լրացված են «0», ապա ($[9] - [10.1] + [10.2] + [11]$) գործողության արդյունքը լրացվում է [Ա] վանդակում, իսկ [Բ] վանդակում լրացվում է «0».

4) եթե լրացված է հաշվարկի [16.Ա] վանդակը, և ($[9] - [10.1] + [10.2] + [11] - [16.Ա]$) գործողության արդյունքը հավասար է 0-ի, ապա հաշվարկի [Ա] և [Բ] վանդակներում լրացվում են «0»: